ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ալբա, Կունեո, Թուրին (Իտալիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Ռուզաննա Պեպանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ալբա, Կունեո, Թուրին (Իտալիայի Հանրապետություն), 2025 թվականի ապրիլի 2-ից մինչև ապրիլի 5-ը

4. **Հրավիրող կողմը.**

Իտալիայի Ալբա քաղաքում գտնվող ծրագրի գործընկեր Ապրո Ֆորմացիոնե ուսումնական կենտրոն

5. **Գործուղման նպատակը**.

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում մեկնարկած IMPROVET-AM ծրագրով կազմակերպված՝ քաղաքականություն մշակողների հետ հանդիպումներին մասնակցություն՝ Պիեմոնտ տարածաշրջանի լավագույն փորձն ուսումնասիրելու, Կարիերայի և աշխատանքի ուղղորդման ծառայություններին, օրենսդրությանը ծանոթանալու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**

Այցի ընթացքում իրականացվեց փորձի փոխանակում մասնագիտական կողմնորոշման ու կարիերայի ուղղորդման, կրթական համակարգի թվայնացման, նորարարական մեթոդաբանությունների կիրառման թեմաներով:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Գործուղման ընթացքում այց կատարվեց Ապրո Ֆորմացիոնե ուսումնական կենտրոն, ներկայացվեց կենտրոնի գործունեությունը, կենտրոնում աշխատանքի վրա հիմնված ուսուցման, աշկերտության համակարգի, կարիերայի ուղղորդման և զբաղվածության ծառայությունների մատուցման գործընթացները: Հանդիպում կազմակերպվեց կենտրոնի տնօրեն Անտոնիո Բոսիոյի հետ:

Այցելեցինք նաև Թուրինում գտնվող Պիեմոնտե ռեգիոնի մարզպետարան, որտեղ տեղի ունեցավ փորձի փոխանակում ռեգիոնի քաղաքականություն մշակողների և մեր միջև: Ներկայացվեց ռեգոնի զբաղվածության քաղաքականությունը (Իտալիայի յուրաքանչյուր ռեգիոն իրավասու է մշակելու իր սեփական քաղաքականությունը), մատուցվող ծառայություններն ու ծրագրերը, որոնք մատուցվում են զբաղվածության պետական գործակալության միջոցով և մասնավոր կազմակերպությունների ներգրավմամբ: Ներկայացվեց նաև կարիերայի ուղղորդման քաղաքականությունը և համապատասխան ծառայությունների մատուցման գործընթացը, ինչպես նաև մասնագիտական ուսուցման համակարգն ու որակավորումների գնահատման ու ճանաչման գործընթացը:

Կազմակերպվեց այց նաև Կունեո քաղաքում գտնվող «Տաղանդների քաղաք» կոչվող կենտրոն, որտեղ նորարարական մոտեցումներով մատուցվում էր մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայություններ բոլոր տարիքի անձանց համար:

Եղանք նաև Piazza dei Mestieri ուսումնական կենտրոնում, որտեղ ուսումնասիրեցինք կենտրոնի գործունեությունը, մասնավորապես կրթության կազմակերպման և կարիերայի ուղղորդման գործընթացները, ուսանողների միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ընթացակարգերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ժամանակ որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Իտալիայի Պիեմոնտ ռեգիոնում իրականացվող զբաղվածության պետական քաղաքականությունը ներառում է միջազգայի պրակտիկում արդյունավետ համարվող մի շարք ծրագրեր՝ մասնագիտական պատրաստման և հմտությունների զարգացման, գործատուներին սուբսիդավորման, հարկերի փոխհատուցման ուղղություններով, որոնք որոշակի տարբերությամբ կիրառվում է նաև Հայաստանում: Սակայն, այնտեղ բավականին արդյունավետ է համարվում հաշմանդամություն ունեցող անձանց քվոտավորման համակարգը, քանի որ բոլոր գործընթացներն իրականացվում և կառավարվում են թվային գործիքների միջոցով:

Հատկապես ուսուցողական էին զբաղվածության ծառայությունների մատուցման ու կարիերայի ուղղորդման համակարգերի բիզնես գործընթացները: Ռեգիոնում գործում է այդ ծառայությունների մատուցման հավաստագրման համակարգը: Մասնավորապես, նշված ծառայությունները մատուցվում են զբաղվածության պետական գործակալության միջոցով, ինչպես նաև հավաստագրված մասնավոր կազմակերպությունների միջոցով: Այն ոչ պետական կազմակերպությունները, որոնք համապատասխանում են հավաստագրման պահանջներին ու պետական չափորոշիչներին՝ ունեն համապատասխան պայմաններ, մասնագիտական կազմ ու հնարավորություններ այդ ծառայությունների մատուցման համար, ստանում են հավաստագիր և պետական ֆինանսավորում՝ պետության կողմից մշակված մեթոդաբանությամբ ու գործիքներով ծառայություններ մատուցելու համար: Այդ ծառայությունների մատուցման մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է մարզպետարանի կողմից: Նշված փորձի կիրառումը Հայաստանում, հաշվի առնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության սահմանափակ մարդկային ռեսուրսներն ու հնարավորությունները, կարող է բարձրացնել ոլորտում մատուցվող ծառայությունների արդյունավետությունը, ինչպես նաև 2024թ.-ին հաստատված՝

Զբաղվածության ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացման հնարավորությունները:

Նշվածից բացի, ինչպես ցույց տվեց Իտալիայի փորձը, մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների կրթությունից աշխատաշուկա անցումը դյուրինացնելուն մեծապես կարող է նպաստել այդ կազմակերպությունների կողմից ուսուցանվող մասնագիտությունների կիրառմամբ ուսումնական հաստատությունների կողմից ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման արդյունավետ համակարգի ներդրումը:

Հատկապես կարևոր եմ համարում Իտալիայում կիրառվող մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման թվային պետական գործիքի նմանօրինակ գործիքի մշակումն ու ներդրումը Հայաստանում (e-work.am հարթակում), որը մեծապես կնպաստի զբաղվածության ոլորտում մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացմանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

_____ **Ռ. Պեպանյան**

11.04.2025